Անձնական օգնականի ծառայություն

Հեշտ ընթերցվող ուղեցույց

Հեղինակ՝ Մուշեղ Հովսեփյան

Այս ուղեցույցը պատրաստվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության կողմից «Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից առաջնորդվող անկախ կյանքի քաղաքականության ջատագովություն» Ծրագրի շրջանակում:

Ծրագիրն իրականացվում է երեք առաջատար հաշմանդամահեն կազմակերպությունների՝ Մոբիլիթի ինթերնեյշնլ ԱՄՆ (MIUSA), «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն և «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ-ների կողմից:

Մարտ, 2024 թ.

Ի՞նչ է անձնական օգնականի ծառայությունը

Անձնական օգնականի ծառայությունը օգնում է հաշմանդամություն ունեցող մարդուն:

Օգնականն օգնում է, որ մարդը մյուսների պես անկախ ապրի:



Այս ծառայությունը պետությունը տրամադրում է, որ հաշմանդամություն ունեցող մարդը կարողանա օգտվել իր իրավունքներից:

Այս ծառայության նպատակն է նաև օգնել հաշմանդամություն ունեցող մարդկանց անել այն՝ ինչ մյուս մարդիկ:

Օգնականի ծառայության շնորհիվ հաշմանդամություն ունեցող մարդիկ կարողանում են գնալ այնտեղ, որտեղ առանց օգնության դժվար կլինի:

Ի՞նչ կանոնների պետք է հետևի անձնական օգնականը

Անձնական օգնականը պետք է հետևի մի քանի կանոնների՝

- Օգնականը պետք է հարգի հաշմանդամություն ունեցող մարդուն և նրա ընտանիքին:

- Օգնականը պետք է լսի, թե ինչ է ասում հաշմանդամություն ունեցող մարդը: Նա չպետք է անի բաներ առանց համաձայնության:

- Օգնականը պետք է գաղտնի պահի այն, ինչ գիտի հաշմանդամություն ունեցող անձի ընտանիքի մասին:

- Օգնականը պետք է լավ կատարի իր աշխատանքը և հետևի օրենքներին:

- Անձնական օգնականը չպետք է հաշմանդամություն ունեցող մարդու փոխարեն որոշումներ կայացնի:

Ի՞նչ է անում օգնականը

Անձնական օգնականն օգնում է՝

- Հոգալ հիգիենայի մասին

- Հագնվել կամ հանվել

- Ուտել, հաց սարքել

- Օգտվել զուգարանից

- Դեղերն ընդունել, գնալ բժշկի



- Խանութ գնալ և առևտուր անել

- Տեղաշարժվել տանը և դրսում

- Ուղեկցել աշխատանքի, ուսումնական վայր, մշակութային կամ սպորտային միջոցառումների

- Նկարագրել այն, ինչ մարդը չի տեսնում

- Այլ բաներ, որոնք գրված կլինեն պայմանագրում:

Ո՞վ կարող է օգտվել անձնական օգնականի ծառայությունից

Ծառայությունը նախատեսված է հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:

Հաշմանդամություն ունեցող մարդու 15 տարեկանը պետք է լրացած լինի:

Մարդը պետք է ունենա այս խնդիրներից գոնե մեկը՝

- Հենաշարժական խնդիրներ,

- Տեսողության խնդիրներ,

- Հոգեկան առողջության խնդիրներ,

- Մտավոր խնդիրներ:



Հաշմանդամությունը պետք է սահմանված լինի ֆունկցիոնալության գնահատման համակարգով: Այն գործում է 2023 թ. փետրվարի 1-ից:

Եթե հաշմանդամությունը սահմանվել է մինչև 2023 թ. փետրվարի 1-ը, ապա պետք է նորից գնահատում անցնել:



Դրա համար պետք է դիմել Միասնական սոցիալական ծառայություն, որը հաճախ անվանում են «սոցապ» կամ «ՄՍԾ»:



Եթե հաշմանդամություն ունեցող անձն ունի հենաշարժական, տեսողության կամ հոգեկան առողջության խնդիրներ, ապա նրա ֆունկցիոնալությունը պետք է գնահատված լինի «խորը» կամ «ծանր»:



Եթե անձն ունի մտավոր խնդիրներ, ապա ֆունկցիոնալությունը պետք է գնահատված լինի «խորը», «ծանր» կամ «միջին»:



Անձնական օգնականի ծառայություններից օգտվելու համար անձը պետք է սովորի կամ աշխատի:



Եթե չեք աշխատում կամ սովորում, պետք է դիմելիս գրավոր խոստանաք, որ կաշխատեք կամ կսովորեք:

Օրական քանի՞ ժամ կարող է օգնել օգնականը

Օգնականը հաշմանդամություն ունեցող մարդուն օգնում է կոնկրետ ժամանակատվածով:

Խորը սահմանափակման դեպքում օգնականը կօգնի մարդուն ամսական առավելագույնը 140 ժամ: Դա մոտավորապես օրական 4 ժամ 40 րոպե է:

Ծանր սահմանափակման դեպքում օգնականը կօգնի մարդուն ամսական առավելագույնը 120 ժամ: Դա մոտավորապես օրական 4 ժամ է:

Միջին սահմանափակման դեպքում օգնականը կօգնի ամսական առավելագույնը 100 ժամ: Դա մոտավորապես օրական 3 ժամ 20 րոպե է:

Ո՞վ կարող է դառնալ անձնական օգնական

Անձնական օգնականը պետք է լինի 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի:

Նրանք պետք է անցնեն վերապատրաստման դասընթացներ:

Նրանք պետք է ունենան վկայական, որը հաստատում է, որ նրանք ավարտել են վերապատրաստումը:

Նրանք չպետք է դատապարտված լինեն որոշակի հանցագործությունների համար:

Նրանք չպետք է ունենան հիվանդություններ, որոնք կարող են խանգարել աշխատանքի համար:

Ինչպե՞ս է ընտրվում օգնականը

Եթե հաշմանդամություն ունեցող մարդը չունի օգնականի թեկնածու, կարող է ցուցակից ընտրել իր անձնական օգնականին:

Անձնական օգնականները գրանցվում են կառավարության կողմից:

Հաշմանդամություն ունեցող մարդը և անձնական օգնականը միասին ստորագրում են պայմանագիր:

Ինչպե՞ս է վճարվելու անձնական օգնականը

Անձնական օգնականի ծառայության համար վճարում է պետությունը:

Հաշմանդամություն ունեցող մարդը և անձնական օգնականը պայմանագիր են կնքում: Այս պայմանագրում գրվում է այն մասին, թե որքան և երբ է վճարվելու օգնականը:

Ամեն ժամի համար պետությունը կվճարի 1050 դրամ: Սա ներառում է նաև հարկերը, որը պետք է օգնականը վճարի պետությանը:

Գումարի ընդհանուր չափը կախված է օգնականի աշխատած ժամերի քանակից: